ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 1234

12 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 25.12.2024թ. տրված թիվ 26122024-04-0011 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 374/ կողմից 04.02.2025թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04011AQZTABD, 040112LHRQJ6 և 04011SHDEWGX.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 6 հասցեում գտնվող հողամասը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, թիվ 6 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, թիվ 6/1 հողամաս,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, թիվ 6/2 հողամաս ։

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման։
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 124Ա

12 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՕԳՈՒՏԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Սահակ Խաչատուրի Բարսեղյանի միջև 21.02.2005թ. /սեղանամատյան թիվ 899/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, <<Ջվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող 1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի վարձակալության պայմանագիր:
Սահակ Խաչատուրի Բարսեղյանի ժառանգորդ /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 11.02.2025թ. հաստատված թիվ 646 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր/ Արմեն Սահակի Բարսեղյանը 11.02.2025 թվականին դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 20.12.2024թ.-ի թիվ 102-Ա որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 21.02.2005թ. կնքված /սեղանամատյան 899/ հողամասի վարձակալության պայմանագրի նախաբանը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Վաղարշապատ համայնքը՝ / հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, քաղաք Էջմիածին, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց 0 շենք/ ի դեմս համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի, այսուհետ վարձատու մի կողմից և Արմեն Սահակի Բարսեղյանը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին>>:
2. Պայմանագրի նախկին նախաբանը համարել ուժը կորցրած:
3. Էջմիածին համայնքի և Սահակ Խաչատուրի Բարսեղյանի միջև 21.02.2005թ. /սեղանամատյան թիվ 899/ կնքված համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, <<Ջվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող 1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Վարձակալությունը վաղաժամկետ դադարեցնելու դիմաց բաց թողնված օգուտի փոխհատուցման համար Արմեն Սահակի Բարսեղյանին վճարել 4 500 000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
5. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված վճարները իրականացնել ներդրումային ծրագրի շրջանակներում «Իմեջին Երևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անհրաժեշտ հողամասերի դիմաց վճարումը կատարելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:
6. Վարձակալի հետ նոտարական կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագրի լուծման համաձայնագիր և սույն որոշման 2-րդ կետով սահմանված դրամական փոխհատուցումը կատարելու համաձայնագիր /պարտավորագիր/, որից հետո կատարել վարձակալության իրավունքի դադարման պետական գրանցում:
7.Վարձակալության իրավունքի դադարման պետական գրանցման պահին՝ վարձակալության պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետևանքով գոյացած վարձավճարները և տույժ տուգանքները հաշվանցել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված վճարներից:
8. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 125Ա

12 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՕԳՈՒՏԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Հմայակ Մնացականի Գալստյանի միջև 10.12.2003թ. /սեղանամատյան թիվ 7492/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող 1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի վարձակալության պայմանագիր:
Հմայակ Մնացականի Գալստյանի ժառանգորդ /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 12.02.2025թ. հաստատված թիվ 654 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր/ Հուսիկ Հմայակի Գալստյանը 12.02.2025 թվականին դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 20.12.2024թ.-ի թիվ 102-Ա որոշումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 10.12.2003թ. կնքված /սեղանամատյան 7492/ հողամասի վարձակալության պայմանագրի նախաբանը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Վաղարշապատ համայնքը՝ / հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, քաղաք Էջմիածին, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց 0 շենք/ ի դեմս համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի, այսուհետ վարձատու մի կողմից և Հուսիկ Հմայակի Գալստյանը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին>>:
2. Պայմանագրի նախկին նախաբանը համարել ուժը կորցրած:
3. Էջմիածին համայնքի և Հմայակ Մնացականի Գալստյանի միջև 10.12.2003թ. /սեղանամատյան թիվ 7492/ կնքված համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող 1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Վարձակալությունը վաղաժամկետ դադարեցնելու դիմաց բաց թողնված օգուտի փոխհատուցման համար Հուսիկ Հմայակի Գալստյանին վճարել 4 500 000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
5. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված վճարները իրականացնել ներդրումային ծրագրի շրջանակներում «Իմեջին Երևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անհրաժեշտ հողամասերի դիմաց վճարումը կատարելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:
6. Վարձակալի հետ նոտարական կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագրի լուծման համաձայնագիր և սույն որոշման 2-րդ կետով սահմանված դրամական փոխհատուցումը կատարելու համաձայնագիր /պարտավորագիր/, որից հետո կատարել վարձակալության իրավունքի դադարման պետական գրանցում:
7.Վարձակալության իրավունքի դադարման պետական գրանցման պահին՝ վարձակալության պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետևանքով գոյացած վարձավճարները և տույժ տուգանքները հաշվանցել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված վճարներից:
8. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Թ Ի Վ 126-Լ

«12» փետրվարի 2025թ.                                        ք. Էջմիածին

## «ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի զեկուցագիրը, փետրվարի 13-ին՝ Տեառնընդառաջի համաքաղաքային միջոցառման ժամանակ 40-օրյա նորածնին նվիրելու համար ոսկյա խաչ ձեռք բերելու նպատակով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝**

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 65.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Էդգար Վասակյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**                    **Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 137Ա

12 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ /ՆԱԽԿԻՆ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 23 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 16.01.2025թ. կազմված հատակագիծը և 12.12.2008թ. տրված թիվ 2627521 սեփականության իրավունքի վկայականը և հաշվի առնելով որ, ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 23 շենքի թիվ 1 բնակարանին կից ինքնակամ կառուցված 11.1քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 128Ա

12 փետրվարի 2025թ.

ք. Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՅՐ ՊԵՏՐՈՍԻ ԻՍԿԱՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Բեկի /նախկին Թելմանի/ փողոցի թիվ 17 տան բնակիչ՝ Հրայր Պետրոսի Իսկաջյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 17.07.2024թ. հաստատված թիվ 4474 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 13.11.2024թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Բեկի /նախկին Թելմանի/ փողոցի թիվ 17 հասցեում գտնվող 0.06665հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Բեկի /նախկին Թելմանի/ փողոցի թիվ 17 հասցեում գտնվող 0.06665հա փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Հրայր Պետրոսի Իսկաջյանի /ծնված՝ 18.08.1958թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1294Ա

12 փետրվարի 2025թ. 

ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.11.2024Թ. ԹԻՎ 1766Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 21.11.2024թ. թիվ 1766Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

հիմնական մասում նշված «08.11.2024թ. կազմված հատակագիծ» բառերի փոխարեն կարդալ «05.02.2025թ. կազմված հատակագիծ» բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1304

12 դեկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Հակոբյան փողոցի թիվ 30 տան բնակիչ՝ Սեդա Սեդրակի Ավագյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 21.06.2024թ. հաստատված 4433 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 27.06.2008թ. տրված՝ թիվ 246 արխիվային տեղեկանք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011FYLA5DZ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Ե. Չարենցի 1-ին թաղամաս թիվ 807 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ    ԹԻՎ 1314

12 փետրվարի 2025թ.    ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ջվարթնոց թաղամասի թիվ 7 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ՝ Խաչատուր Գևորգի Հովհաննիսյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ջվարթնոց թաղամասի թիվ 7գ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2166957 տրված՝ 21.12.2006թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011RR5MMAR/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Ջվարթնոց թաղամաս թիվ 1/7 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝    Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ    Թ Ի Վ 132-Ա

12 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Սայաթ-Նովայի փողոցի թիվ 42 տան բնակիչ՝ Տիգրան Մարտինի Խաչատրյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 23122024-04-0061 տրված՝ 23.12.2024թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 04.02.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011BZDMVKL, 040115DWXREB/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 545 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս թիվ 545 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս թիվ 545/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 1334-Ա

12 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Էքսպերտ Դիալոգ» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0378/ կողմից 04.11.2024թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011UBGFZRT.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցում գտնվող 0.0017հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, քաղաք Էջմիածին Վազգեն Առաջինի փողոց, թիվ 24/15:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 1344

13 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արման Նորիկի Պոտրոսյանի լիազորված անձ՝ Վլադիմիր Սոսի Բերուջանյանի դիմումը՝ Արման Նորիկի Պոտրոսյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 19122024-04-0002 տրված՝ 19.12.2024թ., «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 10.01.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011DU7J3BV, 04011RHWQDYR/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 1 շենքի թիվ 34 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս թիվ 1 շենքի թիվ 34 բնակարան,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս թիվ 1 շենքի թիվ 34/1 բնակարան։

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման։

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 135-Լ

«13» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՄԵՌԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի խորհրդականի զեկուցագիրը, փետրվարի 1-ից 7-ը Ջերմուկ քաղաքում անցկացվող Համահայկական ձմեռային խաղերին Վաղարշապատ համայնքի մարզիկների մասնակցության համար ուղևորափոխադրման ծառայություն ձեռք բերելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 280.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Վանուշ Սահակյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1364

14 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳՀՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Աննա Կարենի Ափոյանի լիազորված անձ՝ Վաղարշապատ համայնքի Այվազովսկու փողոցի թիվ 0 տան բնակիչ՝ Լևոն Հենրիկի Ափոյանը, Համեստուհի Ստյոպայի Գրիգորյանին, Հենրիկ Համբարձումի Ափոյանին, Գարիկ Հենրիկի Ափոյանին, Հասմիկ Օնիկի Սուքիասյանին, Արմեն Կարենի Ափոյանին և Աննա Կարենի Ափոյանին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 09.12.2019թ. տրված քաղվածք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 09.12.2021թ. տրված թիվ 6896, թիվ 6897 և թիվ 6898 գրանցամատյանով գրանցված՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 06.02.2024թ. կազմված հատակագիծ, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Ջվարթնոց>> ԳՀՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0397-0024/, 0.509հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը, ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու /կորիզավոր/ փոխադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Ջվարթնոց>> ԳՀՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0397-0024/, 0.509հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը, փոխադրել ավելի բարձրարժեք ՝ պտղատու այգի /կորիզավոր/ հողատեսքի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1370-Ա

14 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱԴԵՎՈՍ ՎԱՀՐԻՃԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ. Թորամանյան փողոցի թիվ 17 տան բնակիչ՝ Թադևոս Վահրիճի Մարտիրոսյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 08.01.2025թ. հաստատված թիվ 48 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և «Սնան Թովմայան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 27.01.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ. Թորամանյան փողոցի թիվ 17 հասցեում գտնվող 0.089հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ. Թորամանյան փողոցի թիվ 17 հասցեում գտնվող 0.089հա փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Թադևոս Վահրիճի Մարտիրոսյանի /ծնված՝ 07.01.1967թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 138Ա

14 փետրվարի 2025թ. — ք. Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՉԻԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 3 տան բնակիչ՝ Վաչիկ Նահապետի Հովհաննիսյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 07.04.2023թ. կայացված վճիռ Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ1/4868/02/19 և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.01.2025թ. կազմված հատակագծի, Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի քաղաքի Հ. Թումանյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Վաչիկ Նահապետի Հովհաննիսյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0295հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0022հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություն,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0022 հա մակերեսով հողամասը համարել Վաչիկ Նահապետի Հովհաննիսյանի /ծնված՝ 11.03.1957թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1394Ա

14 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 3 տան բնակիչ՝ Վաչիկ Նահապետի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 3 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 07.04.2023թ. կայացված վճիռ Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ1/4868/02/19 և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011CMVBXTK/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Հ. Թումանյան փողոց 2-րդ փակուղի թիվ 5 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 140Ա

14 ապրիլի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի, Կոմիտասի փողոցի թիվ 1 տան բնակիչ՝ Հովհաննես Վոլոդյայի Պետրոսյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1270530 տրված՝ 03.11.2003թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 10.02.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022BYDG5KE, 04022JLUZ5ES/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Կոմիտասի փողոց թիվ 1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Կոմիտասի փողոց թիվ 1/1 կիսակառույց:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 141-Ա

14 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Հակոբյան փողոցի թիվ 7ա տան բնակիչ՝ Դիանա Արմենի Սահակյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25122024-04-0117 տրված՝ 25.12.2024թ., «Կարեն Մանչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 23.01.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011XM7A76A, 04011KP8MQJU/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 237 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի:

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 237 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 237/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1424

14 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Աշոտ Վալոդի Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի /նախկին Պետտնկարան/ թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Վաղարշապատ» նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 22.12.2010թ. հաստատված թիվ 7306 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011XXDWFUF/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Սասունցի Դավթի թաղամաս թիվ 10 շենք թիվ 6 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1431-Ա

14 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 93 տան բնակիչ՝ Սիրանուշ Հովակիմի Հակոբյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 19122019-04-0013 տրված՝ 19.12.2019թ., «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 31.12.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040115WFNBBM, 04011PWA5LKS/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 93 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց թիվ 93/1 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց թիվ 93/2 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 144-Ա

« 18 » փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,2016 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՎԱՐԴԳԵՍ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.02.2025թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 և 2 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող 0,2016 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի աճուրդին մասնակցել է Վարդգես Արամայիսի Խաչատրյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 18.02.2025թ. թիվ 1 և 2 արձանագրությունները:
2. ՀՀ, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող 0,2016 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Վարդգես Արամայիսի Խաչատրյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 145-Ա

«18» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,3433 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԳՈՌ ՄԱՆՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.02.2025թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 3 և 4 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 0,3433 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր գործառնական նշանակության, 3-րդ կարգի հողամասի աճուրդին մասնակցել է Գոռ Մանվելի Սարգսյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 2 116 445 /երկու միլիոն հարյուր տասնվեց հազար չորս հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 18.02.2025թ. թիվ 3 և 4 արձանագրությունները:
2. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 0,3433 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր գործառնական նշանակության, 3-րդ կարգի հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Գոռ Մանվելի Սարգսյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 146-Ա

« 18 » փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,2863 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԳՈՌ ՄԱՆՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.02.2025թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 5 և 6 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 0,2863 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր գործառնական նշանակության, 3-րդ կարգի հողամասի աճուրդին մասնակցել է Գոռ Մանվելի Սարգսյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 1 765 040 /մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար քառասուն/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 18.02.2025թ. թիվ 5 և 6 արձանագրությունները:
2. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 0,2863 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր գործառնական նշանակության, 3-րդ կարգի հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Գոռ Մանվելի Սարգսյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 147-Ա

«18» փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## TOYOTA ISIS 2.0 ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԼԵՎՈՆ ՎԱՆԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.02.2025թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 7 և 8 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող Toyota Isis 2.0 թեթև մարդատար ավտոմեքենայի աճուրդին մասնակցել է Լևոն Վանիկի Թովմասյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 787 756 /յոթ հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 18.02.2025թ. թիվ 7 և 8 արձանագրությունները:
2. Toyota Isis 2.0թեթև մարդատար ավտոմեքենայի աճուրդում հաղթող ճանաչել Լևոն Վանիկի Թովմասյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել փոխադրամիջոցի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ Ու Մ Թ Ի Վ 148Ա**

18 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

**ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ 30.06.1994 ԹՎԱԿԱՆԻ N 1 ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ջորջ Բայրոնի փողոցի 18 հասցեի բնակիչ Համիկ Մնացականի Ամիրյանի դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղխորհրդի գործկոմի 30.06.1994 թվականի N 1 նիստում ընդունված Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացի /նախկին Աթարբեկյան/ 14 շենքի 4 բնակարանը սեփականաշնորհելու վերաբերյալ ակտում կատարել փոփոխություն՝ ըստ բնակարանի սեփականաշնորհման հիմք հանդիսացած փաստաթղթերի ընտանիքի կազմում նշված «Ամիրյան Անի Վարդանի» անունը համապատասխանաբար փոփոխել «Հովհաննիսյան Անի Վարդանի»:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1494

18 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.05.2024Թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ CPP0-0001-2553 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ 29.11.2024Թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ ԱՇԹԴ/400/1117-24 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 15-րդ փողոցի 55 տան բնակիչ՝ Գեղամ Հայրապետի Բարսեղյանի դիմումը և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.02.2025թ. տրված թիվ Կ-07022025-04-0034 գույքի նկատմամբ իրավունքի /սամանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի 02.05.2024թ. տրված թիվ CPP0-0001-2553 շինարարության թույլտվության և 29.11.2024թ. տրված թիվ ԱՇԹԴ/400/1117-24 ավարտական ակտի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

«Լիսիցյան փողոց 23/3» բառերի փոխարեն կարդալ «Լիսիցյան փողոց 21/3» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 150Ա

18 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.02.2025Թ. ԹԻՎ 100Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 06.02.2025թ. թիվ 100Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

որոշման առաջին կետում նշված « Կարեն Աշոտի Գևորգյանը » բառերից հետո լրացնել « այսուհետ վարձակալ, մյուս կողմից » բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1514

18 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցի թիվ 36ա տան բնակիչ՝ Մարինե Լյովայի Վարդանյանը, իրեն, Լյովա Ռոբերտի Վարդանյանին, Գոհար Մկրտչի Սիմոնյանին, Սիրանուշ Լյովայի Վարդանյանին և Ռուզան Լյովայի Վարդանյանին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 06.03.2023թ. տրված թիվ 1086 քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 06.03.2023թ. տրված թիվ 1086 տեղեկանք, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 26.12.2024թ. հաստատված, գրանցամատյանով գրանցված թիվ 10450 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, 26.12.2024թ. հաստատված, գրանցամատյանով գրանցված թիվ 10451 ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր և <<Ավագ Ավագյան Գագիկի>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 06.02.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0181-0009/, 0.477հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0181-0009/, 0.477հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 152Ա

18 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.12.2024Թ. ԹԻՎ 1847Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 05.12.2024թ. թիվ 1847Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

հիմնական մասում նշված «20.11.2024թ. կազմված հատակագիծ» բառերի փոխարեն կարդալ «10.02.2025թ. կազմված հատակագիծ» բառերը.

հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.0503հա» բառերի փոխարեն կարդալ «0.0502հա» բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1534

18 փետրվարի 2025թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 11.02.2025թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011G9SCUNW.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան խճուղում գտնվող 0.0197հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, քաղաք Էջմիածին Էջմիածին-Երևան խճուղի, թիվ 2/20:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ [illegible]

18 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 3-րդ թաղամասի թիվ 20 տան բնակիչ՝ Վանիկ Քեշիշի Օսեփի դիմումը, իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 10062021-04-0016 տրված՝ 10.07.2021թ., «Արմեն Բարոյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0509 / կողմից 17.01.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022MDMN9ZT, 04022ATQARYG/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 15-րդ փողոց, թիվ 10 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 15-րդ փողոց, թիվ 10/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1554

19 փետրվարի 2025թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ե. Չարենցի փողոցի թիվ 3 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ՝ Ֆելիքս Մանուկի Մանուկյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայկ Նախապետի /նախկին Մատրոսովի/ փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 10.12.2024թ. հաստատված 7051 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011EQWLA9J/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Հ. Նախապետի փողոց թիվ 14/3 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307